



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԱՐԱՔՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք,
գ. Գայ, Ա. Խաչատրյան-1

01 մայիսի 2023

ՈՒՂԵՐՁ ԱՇԽԱՏՈՂԻ ԵՎ ԱՇԽԱՏԱՎՈՐԻ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Սիրելի՛ բնակիչներ,

Ջերմորեն շնորհավորում եմ Ձեզ մայիսմեկյան տոնի՝ Աշխատանքի և աշխատավոր մարդու օրվա կապակցությամբ:

Մայիսի 1-ը տոն է բոլոր նրանց համար, ովքեր իրենց ամենօրյա աշխատանքով հիմքեր են ստեղծում արժանապատիվ և ապահով ապագա ունենալու համար: Գաղտնիք չէ, որ հայ ժողովուրդը միշտ էլ աչքի է ընկել իր աշխատասիրությամբ, ստեղծարար մտքով, եռանդուն գործունեությամբ, մեծարել ու գնահատել է աշխատավորին ու նրա աշխատանքը՝ այն խորին համոզմամբ, որ հենց աշխատանքն է դաստիարակում ու գեղեցկացնում մարդուն, մղում կատարելագործման և զարգացման՝ կյանքի տարբեր ոլորտներում: Մաղթում եմ, որ ամեն ոք ունենա իրեն արժանի, իր համար սիրված աշխատանք՝ բավարարված այդ աշխատանքի արդյունքներով և հաջողություններով: Եվ ի վերջո, աշխատանքն է արժանապատիվ կյանքով ապրելու, զարգանալու, ինքնադրսևորվելու և նոր հնարավորություններ ստեղծելու միակ միջոցը:

Եվս մեկ անգամ շնորհավորում եմ տոնի կապակցությամբ, մաղթում ուժ և եռանդ՝ աշխատելու բերկրանքը հնարավորինս երկար զգալու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ